

Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Երևանի պետական համալսարանի
Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2022 թ. նոյեմբերի 15-ին կայացած թիվ 7 նիստի

Գիտական խորհրդի 38 անդամներից նիստին մասնակցել են 28-ը:

Նիստին ներկա էին ԵՊՀ ռեկտոր Հ.Վ. Հովհաննիսյանը, ակադեմիական/ուսումնական գծով պրոռեկտոր Է.Վ. Ասրիյանը, ռեկտորի օգնական Վ.Հ. Խալատյանը, գիտական քարտուղար Մ.Վ. Հովհաննիսյանը, որակի ապահովման կենտրոնի տնօրեն Ա.Ս. Բուդաղյանը, ռազմավարական պլանավորման կենտրոնի տնօրեն Ա.Կ. Բաբաջանյանը:

Օրակարգում ներկայացված էր դեկանի տարեկան հաշվետվության հարցը, հետևաբար առաջարկվեց առաջադրել նախագահողի թեկնածություն: Գիտական խորհրդի անդամների կողմից առաջադրվեց դեկանի տեղակալ, կ.գ.դ. Կ.Ա. Ղազարյանի թեկնածությունը, ով բաց քվեարկությամբ ընտրվեց որպես նախագահող: Այնուհետև նախագահողը քվեարկության դրեց օրակարգը, ինչը միաձայն հաստատվեց:

Օրակարգ՝

1. Կենսաբանության ֆակուլտետի դեկանի տարեկան հաշվետվությունը (գեկուցող՝ դեկան Է.Ս. Գևորգյան):

ԼՍԵՑԻՆ. Կենսաբանության ֆակուլտետի դեկանի տարեկան հաշվետվությունը (01.01.2022թ –31.12.2022թ) ֆակուլտետում կատարած աշխատանքների վերաբերյալ: Իր խոսքում Է.Ս. Գևորգյանը մանրամասն ներկայացրեց ընդհանուր տեղեկություններ կենսաբանության ֆակուլտետի, ամբիոններում իրականացվող ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների մասին, անդրադառնալով միջազգային և հանրապետական գիտական պարբերականներում հրատարակումներին, ինչպես նաև բազային, թեմատիկ և միջազգային ֆինանսավորմամբ ամբիոններում իրականացվող թեմաների քանակին և այլն:

Կից ներկայացվում է Է.Ս. Գևորգյանի հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. ԵՊՀ որակի ապահովման կենտրոնի տնօրեն Ա.Ս. Բուդաղյանը, ով շնորհակալություն հայտնեց բովանդակալից ելույթի համար, հարց ուղղեց պրն. Գևորգյանին ներկայացնել կրթության և գիտության ոլորտում առկա թույլ կողմերը: Պատասխանելով պրն. Բուդաղյանի հարցին, դեկանը նշեց, որ անհանգստացնող է դիմորդների կրթական մակարդակը, ինչը որոշակիորեն բխում է

հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ միջնակարգ և ավագ դպրոցների առջև ծառայած խնդիրներից: Դեկանի կողմից խոսվեց նաև ավագ դպրոցներում հոսքային և ենթահոսքային կրթության կազմակերպման գործընթացի մասին և կարևորվեց ճիշտ հոսքային բաշխման դերը դիմորդների մասնագիտության ընտրության հարցում: Քննարկվեցին նաև մի շարք հարցեր բարձրագույն կրթական համակարգի խնդիրների, ինչպես նաև ուսուցման գործընթացն առավել արդյունավետ կազմակերպելու մեխանիզմների մշակման վերաբերյալ:

Ելույթ ունեցավ կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչ՝ կ.գ.դ., պրոֆ. Պ.Հ. Վարդևանյանը: Նա շնորհակալություն հայտնեց պրն. Է.Ս. Գևորգյանին ֆակուլտետի մեկ տարվա կատարած աշխատանքն ամփոփ ներկայացնելու և գիտակրթական գործընթացների բարելավմանն ուղղված լուրջ քննարկումների համար: Պ.Հ. Վարդևանյանը նույնպես անդրադարձավ ավագ դպրոցներում հոսքային կրթությանը և նշեց, որ այդ սկզբունքն արհեստականորեն դժվարեցնում է և երբեմն նաև մոլորեցնում ուղղորդումը դեպի բարձրագույն ուսումնական հաստատություններ:

Դեկանի տարեկան հաշվետվությունը դրական գնահատեց գենետիկայի և բջջաբանության ամբիոնի վարիչ՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, կ.գ.դ., պրոֆ. Ռ.Ս. Հարությունյանը: Պարոն Հարությունյանը նշեց, որ մտահոգիչ է 2022-2023 ուս. տարվա դիմորդների թվի զգալի նվազումը: Դիմորդների թիվն ավելացնելու համար առաջարկվեց վերաբացել «Երիտասարդ կենսաբանի դպրոց»-ը, որն էլ ավելի կամրապնդի դպրոց-բուհ կապը: Աշակերտների հետագա մասնագիտական կողմնորոշմանը կնպաստի նաև ֆակուլտետում իրականացվող կրթական ծրագրերի, մասնագիտությունների, մասնագիտացումների, գիտական թեմաների մասին իրազեկման գործընթացի ընդլայնումը:

ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյանը շնորհակալություն հայտնեց դեկանին հաշվետվությունը ներկայացնելու համար և առաջարկեց դրական գնահատել դեկանի կատարած աշխատանքը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Կենսաբանության ֆակուլտետի դեկանի կատարած աշխատանքը գնահատել բավարար:

Պարոն Հովհաննիսյանը կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի անդամների հետ քննարկեց հարցերի լայն շրջանակ գիտաուսումնական գործընթացների կազմակերպման, կրթական ծրագրերի բարելավմանն ուղղությամբ, չափազանց կարևորեց բուհ-գործատու համագործակցությունը և այլն:

Հ. Հովհաննիսյանն իր խոսքում նշեց ԵՊՀ-ի կողմից տրամադրվող ներքին ֆինանսավորմամբ դրամաշնորհների թվի ավելացման մասին: Ներկայացրեց ԵՊՀ-ի և Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի («FAST») համատեղ ծրագրերի մեկնարկը, կարևորելով նորարարական մոտեցումները, որոնք կնպաստեն Հայաստանում գիտության հզորացմանը: Հ. Հովհաննիսյանը արդի է համարում գիտելիքի պրակտիկ կիրառումը, հմտությունների զարգացումը, լաբորատոր փորձաքննությունների ներդրումը և որոշակի ծառայությունների մատուցումը, որոնք

կնպաստեն շրջանավարտներին աշխատաշուկայում մրցունակ դարձնելու, ինչպես նաև գումար գեներացնելու համար:

Ռեկտորի կողմից նշվեց նաև անհրաժեշտությունը ճիշտ և ժամանակին կազմակերպելու աշխատանքը գնումների կազմակերպման վարչության հետ՝ հետագա բարդություններից խուսափելու համար:

Կարևորվեցին ֆակուլտետների և տարբեր ինստիտուտների, կազմակերպությունների հետ գործնական կապերի հաստատումը: Ռեկտորի խոսքով նմանատիպ համագործակցությունների շրջանակն անհրաժեշտ է մեծացնել, ինչը ևս կնպաստի գործնական կապերի հետագա ամրապնդմանը, հիմնարար հետազոտությունների ընդլայնմանը և ուղղված կլինեն գիտական և արտադրական առաջընթացին:

Քննարկվեցին ԵՊՀ-ում ուսումնական դասընթացների արդյունավետ կազմակերպման վերաբերյալ հարցեր, մասնավորապես e-learning հարթակում դասընթացների պլանների, շաբաթական նյութերի, գրական աղբյուրների տեղադրման անհրաժեշտության մասին: Անհրաժեշտ է մշտապես ներկայացնել կրթական գործընթացի արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկություններ, վերանայելով ինչպես բակալավրիատի, այնպես էլ մագիստրատուրայի կրթական ծրագրերը՝ համապատասխանեցնելով աշխատաշուկայի պահանջներին և ներկայացվող չափորոշիչներին:

Ըստ ռեկտորի խոսքի, առկա են որոշակի խնդիրներ ուսանողների գնահատման գործընթացում, մասնավորապես մագիստրատուրայում գերազանց գնահատական ստացողների զգալի թիվը:

Խոսվեց նաև այն մասին, որ շրջանառվում է ԵՊՀ-ում ֆակուլտետային գրասենյակի ստեղծման գաղափարը, որի աշխատանքները գտնվում են քննարկման փուլում:

Հ. Հովհաննիսյանը շնորհակալություն հայտնեց կենսաբանության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմին «BioExpo» ցուցահանդեսը կազմակերպելու համար: Ռեկտորը նշեց, որ նման միջոցառումները նպաստում են ֆակուլտետի գործունեության հանրայնացմանը և հնարավորություն են տալիս ներկաներին ծանոթանալու ֆակուլտետում իրականացվող հետազոտական աշխատանքներին, նորագույն սարքավորումներին, գիտական ուղղություններին: Կարևորելով բուհ-գործատու մշտական կապի ապահովումն ու շարունակական զարգացումը, ռեկտորը առաջարկեց պարբերաբար կազմակերպել նմանատիպ միջոցառումներ, որոնք կնպաստեն աշխատաշուկայի պահանջարկի և համալսարանում ստեղծած հնարավորությունների վերաբերյալ բուհի շահառուների շրջանում իրազեկվածության բարձրացմանը:

Ռեկտորն իր խոսքում նշեց նաև, որ ներկայումս արդիական է բուհական կրթության կապն աշխատաշուկայի, մեծ տնտեսվարողների հետ: Համատեղ աշխատանի արդյունքում կարող ենք ունենալ բուհական կրթության և գործատուների պահանջների չափանիշների համապատասխանեցում:

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի անդամներն ոլորտին առնչվող ևս մի շարք հարցեր ուղղեցին ԵՊՀ ռեկտորին: Հ. Հովհաննիսյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ և պարզաբանումներ:

Գիտական խորհրդի նախագահ՝

ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ, պրոֆ.



Է.Ս. Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ դոցենտ

Ի.Վ. Շահազիզյան